2.2.13.1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ) հաշվետվության վերլուծական մաս, 2025թ.

2.2.13.1.1. ԿԳՄՍՆ քաղաքականության հիմնական գերակայությունները

2.2.13.1.1.1. Կրթություն

Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման նախապայմաններից մեկը: Ոլորտի զարգացումը ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի գերակայություններից մեկն է:

Կրթության ոլորտի գլխավոր հիմնախնդիրը կրթական համակարգի բոլոր մակարդակներում կրթության մատչելիության, կրթության որակի և արդյունավետության բարձրացումն է, դրանց համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին, մատչելի, ներառական և հասանելի կրթության ապահովումը բնակչության բոլոր խավերի համար: Այդ նպատակներին հասնելու համար իրականացվում են մեծածավալ ծրագրեր կրթական բոլոր մակարդակներում, որոնք բխում են նաև ««ՀՀ կրթության մինչև 2030թ. զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագրից:

<u>Նախադպրոցական կրթություն</u>

Նախադպրոցական կրթության ոլորտի գերակայություններն են ենթակառուցվածքների բարելավումը, կրթության հասանելիությունն ու մատչելիության ապահովումը, կրթության բովանդակության բարելավումը, մասնագիտական կարողությունների զարգացումը և նախադպրոցական հաստատությունների կառավարման որակի բարձրացումը:

Բարելավվել է ընդգրկվածության ցուցանիշը. 2025թ. նախադպրոցական կրթության համակարգում 3-5 տարեկանների ընդգրկվածությունը կազմել է 81%՝ 2024թ. գրանցած 75% ընդգրկվածության ցուցանիշի փոխարեն: Մինչև 2027թ. նախատեսվում է ընդգրկվածությունը հասցնել 85%-ի:

Ոլորտի թիրախներից մեկը բոլոր խոշորացված համայնքներում մինչև 2 տարեկան երեխաների մսուրի ծառայության ընդլայնումը և վաղ մանկության տարիքի խմբերի ստեղծումն է: Այդ նպատակով Երևանի 2 նախադպրոցական ուսումնական հաստատություններում արդեն բացվել են նման խմբեր: Կազմակերպվել են այդ խմբերի հետ աշխատող մասնագետների կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումներ: Նախաձեռնությունը կրում է շարունակական բնույթ և կընդլայնվի հաջորդ տարի:

Նախադպրոցական կրթության հասանելիության ապահովման խոշոր ծրագիրը 500 մանկապարտեզների և նախակրթարանների կառուցման, վերակառուցման և վերանորոգման/հիմնանորոգման ծրագիրն է. 2025թ. դրությամբ կառուցվել, վերակառուցվել, հիմնանորոգվել/վերանորոգվել են շուրջ 280 մանկապարտեզներ և նախակրթարաններ: Բոլոր նորակառույց և վերանորոգված մանկապարտեզները և նախակրթարանները հագեցվել են ժամանակակից պահանջներին բավարարող նոր գույքով:

Նախադպրոցական կրթության պատշաճ որակի ապահովման նպատակով 2025թ. նախադպրոցական կրթության չափորոշիչը ներդրվել է հանրապետության բոլոր մանկապարտեզներում և նախակրթարաններում:

Շարունակվել է մանկապարտեզներում համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացը. 2025թ. ՀՀ պետական բյուջեից անվճար նախադպրոցական կրթություն է ստացել կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 1,693 երեխա, զինծառայող ծնողի (ծնողների) 7,019 երեխա:

Նախադպրոցական կրթության չափորոշչի ներդրման շրջանակում ընդհանուր առմամբ վերապատրաստվել է նախադպրոցական ուսումնական հաստատության 1195 մանկավարժական աշխատող:

Հանրակրթություն

2025թ. կրթության ոլորտում հանրակրթությունը շարունակել է մնալ առաջնահերթություն, որի շրջանակում բարեփոխումները իրականացվել են հետևյալ հիմնական գերակա ուղղություններով՝

- հանրակրթության ոլորտի ենթակառուցվածքների և ուսումնանյութական բազայի արդիականացում,
- կրթության բովանդակային հենքի՝ առարկայական ծրագրերի և դասագրքերի բովանդակային բարելավում,
- ուսուցիչների ատեստավորման, խրախուսման և մասնագիտական զարգացման գործիքակազմի կիրառում,
- հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման արդյունավետության բարձրացում,
- հանրապետության պետական դպրոցներում ժամանակակից բնագիտական և ինժեներական լաբորատորիաների ստեղծում՝ էապես բարելավելով կրթության որակը, հատկապես ԲՏՃՄ ուղղություններով:

Հանրակրթության նոր չափորոշիչը 2025թ. սեպտեմբերից ներդրվել է ՀՀ բոլոր դպրոցների 1-11-րդ դասարաններում՝ զուգակցվելով նոր դասագրքերի, ուսումնական նոր բովանդակության մշակմամբ և ստեղծմամբ: Չափորոշչի ամբողջական ներդրումը կավարտվի 2026թ.:

Հատուկ ուշադրության կենտրոնում է «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների և 500 մանկապարտեզների ծրագրի» իրականացումը, որի շրջանակներում 2021-2025թթ. կառուցվել, վերակառուցվել և վերանորոգվել/հիմնանորոգվել է 100 դպրոց (այդ թվում՝ կառուցում՝ 36, վերակառուցում՝ 3, վերանորոգում/հիմնանորոգում՝ 61), որից 55-ը՝ միայն 2025թ.: Բոլոր ավարտված և շահագործված ուսումնական հաստատություններն ապահովված են նոր գույքով: Ծրագրի շրջանակում ներդրվել է շինարարության նոր ստանդարտ. անվտանգ ու ապահով միջավայրը հասանելի է դարձել սովորողների շուրջ 30%-ի և ավելի քան 30,000 նախադպրոցական տարիքի երեխաների համար:

2025թ. տարեվերջի դրությամբ հանրապետության դպրոցների շուրջ 70%-ը կամ շուրջ 800 դպրոց ապահովված է ժամանակակից բնագիտական և ինժեներական լաբորատորիաներով՝ նպաստելով երեխաների հետաքրքրվածության ու սովորելու արդյունավետության աճին:

Շարունակվել է հանրակրթության ֆինանսավորման էական աճը. միայն դպրոցների պահպանման ծախսերին հատկացվել է 127.8 մլրդ դրամ: Այս ֆինանսավորումը հնարավոր է դարձնում անհատականացված դասացուցակը ավագ դասարաններում՝ ապահովելով մասնագիտական կողմնորոշումը, երկարօրյա ուսուցումը ցածր առաջադիմությամբ երեխաների համար, բազմազան խմբակների և նախագծային աշխատանքների իրականացումը, ինչպես նաև ուսուցչի մանկավարժական համարժեք ծանրաբեռնվածությունը՝ շաբաթական 22 դասաժամի փոխարեն 18 դասաժամ տարրական օղակում և 20 դասաժամ՝ միջին և ավագ օղակում:

ՀՀ կառավարության 2025թ. հունիսի 26-ի N 850-Լ որոշմամբ հաստատվել են դպրոցների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը, պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը, դպրոցների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցները և նորմատիվները: Ֆինանսավորման նոր կարգով դպրոցներին հնարավորություն է ընձեռվել դասարանական կրթությունից բացի, նաև արտադասարանական մեխանիզմներ ներդնել՝ երեխաների կրթությունը բարելավելու և մոտիվացիան մեծացնելու նպատակով:

Հանրակրթական բարեփոխումներում գերակայություններից մեկը ուսուցիչների մասնագիտական զարգացումն ու դրան փոխկապակցված՝ վարձատրության բարձրացումն է: 2025թ. գործել են ուսուցիչների հավելյալ խրախուսման 5 ծրագրեր, որոնց համար պետական բյուջեից ֆինանսավորումը կազմել է 14.8 մլրդ դրամ: 2025թ. դրությամբ կամավոր ատեստավորումը հաջողությամբ հաղթահարել և այժմ ատեստավորված է 9,602 անձ կամ ուսուցիչների շուրջ 31%-ը: Այս քաղաքականության շնորհիվ դպրոց են մուտք գործել շուրջ 4,000 նոր ուսուցիչներ, որոնց 80%-ը մինչև 45 տարեկան է:

Տարակարգ ստացած և 10-50% հավելավճար ունեցող ուսուցիչների թիվը 2025թ. դրությամբ կազմում է 1,564, այդ թվում՝ 831 ուսուցիչ հավելավճար է ստացել տարակարգի տրամադրման նոր համակարգի շրջանակում:

2025թ. դրությամբ բնագիտական և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտների առարկաներ դասավանդող 9,492 ուսուցիչ ստացել է 25% հավելավճար, իսկ գյուղական մինչև 100 սովորող ունեցող դպրոցների ուսուցիչների խրախուսման ծրագրի շահառու է եղել 3,278 ուսուցիչ՝ ստանալով մինչև մեկ դրույք ուսուցչական աշխատավարձ՝ անկախ դասավանդած դասաժամերից:

Արդյունքում ուսուցիչների մասնագիտական զարգացման և խրախուսման ծրագրերի արդյունքում բարձրացել է բազմաթիվ ուսուցիչների վարձատրությունը. 300,000–400,000 դրամ աշխատավարձ ստացել է 2,952 ուսուցիչ, 400,000–500,000 դրամ՝ 1,362 ուսուցիչ, 500,000–600,000 դրամ՝ 220 ուսուցիչ, 600,000–700,000 դրամ՝ 70 ուսուցիչ, և 700,000 դրամ և ավելի աշխատավարձ՝ 13 ուսուցիչ:

ՀՀ բոլոր մարզերի դպրոցների 1-4-րդ դասարանների և նախակրթարանների 108,082 երեխաների առողջ սննդի տրամադրման նպատակով շարունակվել է «Դպրոցական սնունդ» միջոցառումը ՀՀ պետական ֆինանսավորմամբ, ինչի շնորհիվ աշակերտներին կայուն դպրոցական սննդով ապահովող դպրոցների մասնաբաժինը հանրապետությունում հասցված է 86.2%-ի: Իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ՝ Երևանի դպրոցները ներառելու նպատակով 2026թ. պիլոտային ծրագրեր մեկնարկելու ուղղությամբ:

Արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների որակի բարձրացման նպատակով ներդրված կամավոր ատեստավորման գործընթացը 2025թ. իրականացվել է 11 ուղղություններով, որոնց մասնակցել է 436 հոգի: Արդյունքում, 2025թ. դրությամբ հավելավճար ստացած մանկավարժական աշխատողների ընդհանուր թվաքանակը կազմել է 256:

Հանրակրթության ոլորտի համար շարունակում են գերակա համարվել կառավարման բարեփոխումները. Ազգային ժողովի կողմից 2025թ. հոկտեմբերին հաստատվել է բոլոր դպրոցների բովանդակային կառավարումը կրթության լիազոր մարմնին վերապահելու օրենսդրական փաթեթը, որի կիրարկումը հնարավորություն կընձեռի հանրապետության բոլոր դպրոցներում ապահովել կրթության որակի միասնական ստանդարտներ: Միասնական լիազոր մարմնին դպրոցները կփոխանցվեն երկու փուլով՝ սկսած 2026թ. սեպտեմբերից:

2025թ. դրությամբ դպրոցի բովանդակային և վարչատնտեսական կառավարման տարանջատված համակարգի է անցել 593 դպրոց կամ պետական դպրոցների 44%-ը: Կառավարման համակարգի փոփոխության գործընթացում մեծ ուշադրություն է հատկացվել նաև վարչատնտեսական կառավարման բարելավմանը:

Վերանայվել է հանրակրթական դպրոց ընդունելության էլեկտրոնային գործընթացը, ինչը հնարավորություն կտա 2026թ.-ից դպրոցի հայտագրումն ու ընդունելությունն ամբողջապես առցանց տիրույթում իրականացնել:

Մասնագիտական կրթության և ուսուցման ծրագիր

«Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համակարգային փոփոխություններ են շարունակվել իրականացվել ոլորտում, որի գերակայություններից են աշխատանքի վրա հիմնված ուսուցման կազմակերպումը, մասնավորի հետ համագործակցությունն ու տնտեսության հետ կապը, գերակա ոլորտների մասնագիտությունների գծով ընդունելության խրախուսումը:

Էապես բարձրացել է մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի գրավչությունը. եթե Կառավարության 5-ամյա ծրագրի առաջին տարում՝ 2021թ. մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվել էր 12,772 ուսանող, ապա 2025թ. ցուցանիշը կազմել է 16,497՝ 2024թ. նկատմամբ գրանցելով ընդունելության 9.5% աճ: Այսպիսով, 2025թ. դրությամբ քոլեջներում սովորել է ավելի քան 47,000 ուսանող՝ 2021թ. նկատմամբ 2025թ. ընդունելության ցուցանիշը բարելավվել է մոտ 29%-ով: Թիրախային ցուցանիշը 2027թ. համար նախատեսվում է հասցնել 32%-ի:

Պետության համար առաջնահերթ և կարևոր ոլորտների մասնագիտություններով ամսական 50,000 դրամ կրթաթոշակային ծրագիրն իր էական ազդեցությունն է ունեցել ընդունելության արդյունքների բարելավման վրա, որի արդյունքում 2025թ. ընդունվել է 1,786 ուսանող:

Մշակվել և ներդրվել է 3 դուալ կրթական ծրագիր: Ընդհանուր առմամբ, 2025թ. դրությամբ դուալ ուսուցմամբ կրթական ծրագրեր իրականացվում են 20 քոլեջում: 2027թ. նախատեսվում է թիրախը հասցնել 24-ի: Աշխատաշուկայի պահանջներից ելնելով՝ ներդրվել է 2 նոր մասնագիտություն, 2027թ. նախատեսվում է աշխատաշուկայի պահանջներից բխող վերջին 3 տարիների ընթացքում ներդրված նոր մասնագիտությունների քանակը հասցնել 16-ի:

2025թ. շարունակվել է քոլեջների դասախոսների և վարպետների վարձատրությունը առնվազն կրկնապատկող, երբեմն նաև եռապատկող ատեստավորման մեխանիզմը: Այն մեկնարկել էր 2024թ.՝ 4 ուղղությամբ՝ ագրարային, SS, խոհարարություն և ոսկերչություն, 2025թ. ատեստավորման ուղղություններն ընդլայնվել են՝ ներառելով նաև տեքստիլ ոլորտին վերաբերող մասնագիտությունները: 2025թ. դրությամբ 52 մանկավարժական աշխատող ունի դրույքաչափի բարձրացում, իսկ 274-ը՝ դրույքաչափի բարձրացում և հավելավճար՝ կախված ատեստավորման արդյունքում հավաքած միավորներից:

2025թ. շարունակվել են իրականացվել քոլեջների ենթակառուցվածքների բարելավման ծրագրերը, արդյունքում 1.2 մլրդ դրամ ուղղվել է 10 օբյեկտի գծով շենքային պայմանների և գույքային հագեցվածության բարելավմանը:

Բարձրագույն կրթություն

2025թ. հոկտեմբերին ուժի մեջ է մտել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքը, որն ապահովել է ինստիտուցիոնալ ներդաշնակություն ՀՀ կրթության մինչև 2030թ.

զարգացման պետական ծրագրով սահմանված թիրախների, ինչպես նաև միջազգային չափորոշիչների հետ:

Բարձրագույն կրթության ոլորտի զարգացումը սերտորեն կապված է վերոնշյալ երկու փաստաթղթերով սահմանված գերակայությունների հետ, որոնցից են նոր ենթակառուցվածքների ստեղծումը, բարձրագույն մասնագիտական կրթության որակի բարելավումը, եվրոպական կրթական տարածքին ինտեգրումը, սոցիալապես խոցելի խավերի համար մասնագիտական կրթության մատչելիության և հասանելիության ապահովումը՝ կրթաթոշակների տրամադրման նոր մոտեցումների ձևավորման միջոցով:

Այս համատեքստում ՀՀ բուհերի ընդունելության մրցույթի հիմնական և լրացուցիչ փուլերի արդյունքներով գործող համակարգով բակալավրի կրթական ծրագրերով բուհ է ընդունվել 10,970 առաջին կուրսեցի, որոնցից 2,074-ը՝ անվճար հիմունքներով, իսկ 8,896-ը՝ վճարովի հիմունքներով: Այս ցուցանիշը գերազանցում է նախորդ տարիների ընդունելության արդյունքները:

2025-2026 ուսումնական տարում բուհերում նպատակային ընդունելության շրջանակներում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին հատկացվել է ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ 11 տեղ, իսկ վճարովի համակարգ է ընդունվել 23 ուսանող:

2025թ. պետության կողմից ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ ուսուցման ընդունելության համար նախատեսված 2,142 ընդհանուր տեղերի թվի ավելի քան 59%-ը հատկացվել է ԲՏՃՄ ոլորտին:

Շարունակվել է ՀՀ կառավարության 2023թ. օգոստոսի 24-ի որոշման հիման վրա պետության կողմից ԲՏՃՄ ուղղություններով մասնագիտական մանկավարժության և ագրարային մի շարք մասնագիտություններով սովորողների խրախուսման ծրագիրը՝ ամսական 70,000-77,000 դրամ կրթաթոշակի միջոցով, որի շրջանակներում 2025թ. բուհ է ընդունվել 512 ուսանող:

2025թ. շարունակվել են ՀՀ կառավարության 2023թ. հոկտեմբերի 12-ի N 1762-Լ և 2023թ. հոկտեմբերի 21-ի N 2291-Լ որոշումների հիմքով 2023թ. մեկնարկած՝ Ղարաբաղից տեղահանված ուսանողների աջակցության ծրագրերը, որոնց շրջանակում շահառուներն ուսման վարձի փոխհատուցում են ստանալու մինչև ուսումնառության ավարտը՝ ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 75%-ը հաղթահարելու դեպքում: Արդյունքում, վերոնշյալ որոշումների շրջանակում 2025թ. ուսման վարձի փոխհատուցում է ստացել 2,057 ուսանող:

Բարձրագույն կրթության ոլորտի գերակայություններից մեկը «Ակադեմիական քաղաք» ծրագիրն է, որի գլխավոր հատակագծի փաթեթն ամբողջականացվել է և ներկայացվել հաստատման: Հատակագծի մշակման շրջանակներում իրականացվել է նաև տրանսպորտային շարժունակության նախագծի մշակում:

Ակադեմիական քաղաքի գիտակրթական և տեխնոլոգիական բաղադրիչի շրջանակում շարունակվել է համագործակցությունը Մյունխենի տեխնիկական համալսարանի, Լոնդոնի համալսարանական քոլեջի, Լոնդոնի արվեստների համալսարանի և Շոտլանդիայի թագավորական կոնսերվատորիայի հետ:

2.2.13.1.1.2. Գիտություն

Գիտության ոլորտը դիտարկվում է որպես ՀՀ կայուն զարգացման անկյունաքարային ոլորտներից մեկը: Գիտության ոլորտի քաղաքականության հիմնական թիրախներն են՝

- մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացումը,

- գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացումը և երիտասարդ կադրերի ներգրավումը,
- գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացումը:

2025թ. ընդունվել է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՕ-285-Ն օրենքը, որով սահմանվել են գիտության ոլորտի համաչափ զարգացմանն ուղղված քաղաքականության ձևավորման և իրականացման հիմքերը և պայմանները: Միաժամանակ, 2025թ. մշակվել են ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2026-2030թթ. ռազմավարական ծրագիրը, դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը, ինչպես նաև ՀՀ-ում գիտության և տեխնոլոգիաների ոլորտների զարգացման 2026-2030թթ. գերակա ուղղությունները:

2025թ. գիտության ոլորտին հատկացվող պետական միջոցների ծավալը կազմել է 30 մլրդ դրամ: Միայն գիտական ենթակառուցվածքի արդիականացմանն ուղղված ծախսերը կազմել են 15 մլրդ դրամ, որի շրջանակում գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների զարգացման, ծրագրերի իրականացման, գիտական սարքավորումների արդիականացման, միջազգային համագործակցությանն աջակցության նպատակով 2025թ., ինչպես և 2024թ., ներգրավված է եղել 57 կազմակերպություն, ՀՀ-ն անդամակցել է 4 միջազգային գիտական կառույցի, ֆինանսավորման են երաշխավորվել երիտասարդ գիտնականների 12 դպրոց, 31 գիտական միջոցառում և 20 գործուղում:

Թիրախային հետազոտությունների շրջանակներում կատարված ծախսերը կազմել են 305.3 մլն դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ կրկնապատկվել է՝ պայմանավորված ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի քանակով՝ 14 ծրագիր նախորդ տարվա 8-ի դիմաց:

Գիտական դրամաշնորհային հետազոտությունների գծով ծախսերը կազմել են 8.2 մլրդ դրամ՝ 26.1%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, որի շրջանակում թեմատիկ հետազոտությունների թիվը կազմել է 778՝ նախորդ տարվա 712-ի դիմաց:

Շարունակվել և ամփոփվել է 2021թ. ատեստավորում անցած գիտական և ճարտարագիտական աշխատողների բազային պետական աշխատավարձի աստիճանական աճը՝ 2018-2021թթ. համեմատ, ըստ յուրաքանչյուր պաշտոնի/տարակարգի, ավելանալով 105%-ից մինչև 300%-ով:

Երևանի պետական համալսարանում իրականացվել է արհեստական բանականության կենտրոնի գործարկում՝ խթանելով նորարարական և բարձր տեխնոլոգիական ուղղությունների զարգացումը:

Միաժամանակ, 14 գիտական կազմակերպությունները վերազինվել են ժամանակակից սարքավորումներով՝ նպաստելով ոլորտային համալիր հետազոտությունների իրականացմանը և գիտական ենթակառուցվածքների բարելավմանը:

Ներկայումս «Վեբ օֆ Սայնս» (Web of Science) միջազգային գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված, ազդեցության գործակից ունեցող պարբերականներում հրապարակված գիտական հոդվածների թիվը կազմում է 1,646, իսկ 2027թ. համար սահմանված թիրախային ցուցանիշով այն նախատեսվում է ավելացնել՝ հասցնելով 4,500-ի:

2025թ. որակական աճ են գրանցել հայաստանյան գիտական ամսագրերը. հայաստանյան երեք ամսագրեր գրանցվել են միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում՝ այսպիսով հայաստանյան ամսագրերը հասանելի դարձնելով մեր գիտնականների համար:

Արտերկրի առաջատար կենտրոններում աշխատող գիտնականների ղեկավարությամբ մրցունակ գիտական ստորաբաժանումների թիվը 2025թ. կազմել է 76, որի թիրախային ցուցանիշը 2027թ. նախատեսվում է ավելացնել՝ հասցնելով ավելի քան 240-ի:

Գերմանիայի, Չեխիայի, ԱՄՆ-ի, ՌԴ-ի, Բելգիայի, Իտալիայի, Չինաստանի, Ֆրանսիայի, Իսպանիայի և այլ երկրների առաջատար գիտական կենտրոններում վերապատրաստում անցնելու հնարավորություն է տրվել 38 հետազոտողի, 2027թ. թիրախային ցուցանիշը նախատեսվում է ավելացնել՝ հասցնելով 400-ի:

2.2.13.1.1.3. Մշակույթ

Մշակույթի ոլորտի պետական քաղաքականության հիմնական գերակայություններն են մշակութային ժառանգության պահպանությունն ու անխաթար փոխանցումը սերունդներին, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում մշակույթի դերի մեծացումն ու ընդլայնումը, մշակույթի տնտեսականացման ինստիտուցիոնալ կառուցակարգերի ստեղծումը, մշակույթի հասանելիությունը և ներառականությունը, արվեստի տարածման և ժառանգության պահպանության գործում մարզերի ներգրավումը, ժամանակակից մշակութային մրցունակ արտադրանքի ստեղծումը:

Ոլորտային քաղաքականությունն արտացոլված է ՀՀ մշակույթի պահպանության, զարգացման և հանրահռչակման 2023-2027թթ. ռազմավարության և դրա կատարումն ապահովող գործողությունների ծրագրի մեջ, ինչպես նաև ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրում:

Ոլորտի համակարգային բարեփոխումների առաջմղման նպատակով 2025թ. ընդունվել է «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքը և վերջինիս կիրարկումն ապահովող 3 ենթաօրենսդրական ակտ, որոնցով կարգավորվել են ինքնազբաղ արվեստագետների գործունեությունը, սահմանվել են ստեղծագործական գործունեության տնտեսական արդյունավետության նոր հիմքերն ու պայմանները: Բարելավվել է մշակութային ժառանգության բնագավառի իրավապայմանագրային դաշտը, ընդունվել են «Մշակութային աճուրդների կազմակերպման մասին» ՀՀ օրենքը և աճուրդային տների լիցենզավորման կարգը:

<u>Ժամանակակից արվեստ, կինեմատոգրաֆիա, գրահրատարակչություն</u>

Շարունակվել է թատերահամերգային կազմակերպությունների ֆինանսավորման նոր մոդելի ներդրումը: Նոր մոդելը հնարավորություն է տվել ծավալել ավելի ինտենսիվ մշակութային գործունեություն, մասնավորապես՝ օպերային թատրոնում կայացել է 260 ներկայացում և 5 առաջնախաղ (ծրագրված համապատասխանաբար 157-ի և 4-ի փոխարեն)՝ շուրջ 180,000 հանդիսատեսի ընդգրկմամբ, ապահովելով մինչև 20% տարեկան եկամուտների աճ և 37% աշխատավարձերի բարձրացում: Տիկնիկային թատրոնում անցկացվել է 831 ներկայացում և 7 առաջնախաղ՝ շուրջ 119,600 հանդիսատեսի ընդգրկմամբ՝ ապահովելով մինչև 35% տարեկան եկամուտների աճ և մինչև 50% աշխատավարձների բարձրացում: Երևանի կամերային թատրոնի պարագայում ցուցանիշները 2025թ. համար կազմում են 243 ներկայացում, 29,390 հանդիսատես՝ ապահովելով մինչև 22% տարեկան եկամուտների աճ (15%-ի փոխարեն) և մինչև 50% աշխատավարձերի բարձրացում:

Թատերական ներկայացումների բեմադրությունների և թատրոնների գործունեության ապահովման համար հատկացված 2 մլրդ պետական ֆինանսավորման շրջանակում ներկայացումների քանակը կազմել է 2,251:

Երաժշտական, պարային, համերգային կազմակերպությունների գործունեության ապահովման և համերգային ծրագրերի իրականացման համար հատկացված 3 մլրդ ֆինանսավորման շրջանակում տեղի է ունեցել 797 համերգ՝ գերազանցելով պլանավորած ցուցանիշը 231-ով, ինչը պայմանավորված է կազմակերպությունների նոր համերգային ծրագրերի իրականացմամբ:

Ինքնազբաղ արվեստագետների համար ստեղծագործելու բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով 22 խմբերի և 58 անհատ կատարողների հնարավորություն է ընձեռվել մասնակցելու 15 երկրում անցկացվող միջազգային կարևոր երաժշտական և թատերական փառատոների: Ընդ որում, 2025թ. թիրախային ցուցանիշը ինքնազբաղ/անկախ ստեղծագործողների դեպքում կազմել է 23, իսկ 2027թ. կկազմի 65:

Մշակույթի ապակենտրոնացման, մարզերում մշակութային կյանքի և մշակութաստեղծ գործունեության ակտիվացման նպատակով իրականացվել է 14 ծրագիր, որից 7-ը երաժշտական փառատոն՝ ավելի քան 106,300 հանդիսատեսի (որը 20%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը), և 3 թատերական փառատոն՝ 14,000 հանդիսատեսի ընդգրկմամբ: Հատկապես սպասված են Ֆեստիվառ մշակութային-զբոսաշրջային և Արուճի հոգևոր երաժշտական փառատոները, որոնք դարձել են ժամանցի անցկացման նախընտրելի ձև: 2027թ. թիրախային ցուցանիշը կկազմի 23 ծրագիր: Այս համատեքստում խրախուսվել է թատերահամերգային կազմակերպությունների՝ պարտադիր սկզբունքով մարզերում ծրագրերի իրականացման քաղաքականությունը, որի արդյունքում 2025թ. 10 մարզում անց է կացվել 20 կազմակերպության 92 համերգ և ներկայացում՝ ընդհանուր 71,000 հանդիսատեսի ներգրավմամբ:

Ընդլայնվել է մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոների և մրցանակաբաշխությունների մասնակցած և մրցանակի արժանացած մշակույթի գործիչների թիվը, որոնք օգտվել են դրամական խրախուսում ստանալու ծրագրից: 2025թ. ծրագրի շահառու է դարձել 11 արվեստագետ և 8 կազմակերպություն, որոնք մասնակցել են 22 հեղինակավոր հարթակի և արժանացել մրցանակների: 2024թ. համեմատ անհատ շահառուների թիվը գրեթե եռապատկվել է, կազմակերպություններինը՝ կրկնապատկվել, կրկնապատկվել է նաև դրամական խրախուսման բյուջեն:

Պետական ֆինանսավորմամբ իրականացվել է 20 հոբելյանական ծրագիր: Մեծ հանդիսավորությամբ Հայաստանում և արտերկրում նշվել են Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի (ՀԱՖՆ) հիմնադրման 100-ամյակը, Ավետիք Իսահակյանի ծննդյան 150-ամյակը, Հարություն Խաչատրյանի 70-ամյակը, Հենրիկ Մալյանի 100-ամյակը և Գյումրու թատրոնի հիմնադրման 160-ամյակը:

Ներդրվել է Հայաստանում համաշխարհային գերաստղերի հյուրընկալման ամենամյա ծրագիրը՝ նպատակ ունենալով դիրքավորել Հայաստանը համաշխարհային մշակութային տիրույթում և նպաստել մշակութային տուրիզմի զարգացմանը: Այս շրջանակներում 2025թ. Հայաստանում կայացել է համաշխարհային աստղ Ջենիֆեր Լոպեսի համերգը, որին մասնակցել է 30,000 հանդիսատես, որից 15,000-ը՝ զբոսաշրջիկ:

Հայաստանում 2025թ. անցկացվել են Ղազախստանի և Վրաստանի մշակույթի օրերը: Սեպտեմբերին Իրանում՝ Պերսեպոլիսի պատմական հուշարձան-համալիրի տարածքում, տեղի է ունեցել ՀԱՖՆ բացօթյա համերգը, որը նվիրված էր ՀԱՖՆ հիմնադրման 100-ամյակին: Նոյեմբերին Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում տեղի է ունեցել Մեսրոպ Մաշտոցի անվան փողոցի բացումը:

Գեղարվեստական կրթության զարգացման, երեխաների հոգևոր և գեղագիտական ընդունակությունների բացահայտման նպատակով 2025թ. պետական ֆինանսավորմամբ իրականացվել է 16 մանկապատանեկան կրթամշակութային ծրագիր՝ ավելի քան 31,000 երեխայի մասնակցությամբ:

Մշակութային հաստատությունների շենքային ու գույքային պայմանների, միջավայրի բարելավման, երաժշտական գործիքներով ապահովման նպատակով 2025թ. 978.8 մլն դրամի չափով ներդրումներ են արվել 10 թատերահամերգային հաստատություններում:

Շարունակվել են համակարգային բարեփոխումները կինեմատոգրաֆիայի ոլորտում: Կինոարտադրության արդյունավետության, ոլորտի տնտեսականացման և զարգացման նոր հնարավորությունների խթանման նպատակով 2025թ. ապրիլի 10-ին ՀՀ կառավարության N 412-Ն որոշմամբ հաստատվել է ոլորտում ներդրումների մասնակի վերադարձի մեխանիզմը:

Աջակցություն է տրամադրվել 3 միջազգային կինոփառատոների իրականացմանը՝ «Ոսկե ծիրան», «ՌԵԱ» փառատոն, Երևանի կարճամետրաժ ֆիլմերի 8-րդ կինոփառատոն: 2027թ. նախատեսվում է Հայաստանում միջազգային կինոփառատոների քանակը հասցնել 5-ի: Շարունակվել են թվայնացվել և վերականգնվել կինոժառանգության 13 ֆիլմ և 150 լուսանկար:

Գրական-մշակութային ժառանգության պահպանման, զարգացման և հանրահռչակման նպատակով շարունակել է իրականացվել Երևանյան Գրքի միջազգային փառատոնը՝ շուրջ 60 հրատարակչության ներգրավմամբ:

<u>Մշակութային ժառանգության շարունակական պահպանում և հանրահռչակում</u>

Մշակութային ժառանգության շարունակական պահպանման, հանրահռչակման, մշակութային զբոսաշրջության զարգացման և խթանման նպատակով 2025թ. պետական բյուջեից փաստացի հատկացվել է 5 մլրդ դրամ:

Թանգարանային նմուշների պահպանության, ցուցահանդեսների կազմակերպման, մասնագետների վերապատրաստման նպատակով 2025թ. պետական ֆինանսավորումը կազմել է 2.6 մլրդ դրամ, որի արդյունքում թանգարաններն իրականացրել են 18 միջազգային ժամանակավոր ցուցադրություններ՝ նախորդ տարվա 12-ի փոխարեն՝ գերազանցելով նույնիսկ 2027թ. համար նախանշված ցուցանիշը 12.5%-ով: Դրանցից առանձնահատուկ նշանակություն ունեն «Սրբազան երկխոսություն. Լուվրից Հայաստանի պատմության թանգարան» ցուցադրությունը, «Հայկական իմպրեսիոնիզմի գույներն ու լույսերը» խորագրով ցուցահանդեսը՝ Ֆրանսիայի Բարբիզոնի «L'ESQUISSE» մշակութային կենտրոնում, «Սարոյանական գույներ. բառերից անդին» միջազգային ցուցահանդեսը: Թանգարաններ այցելությունների տարեկան թիվը կազմել է շուրջ 1.6 մլն:

Գրադարաններում և թանգարաններում իրականացվել է 2,292 կրթամշակութային ծրագիր, որոնց մասնակցել է 48,502 այցելու՝ գերազանցելով անգամ 2027թ. սահմանված «32,000 շահառու» թիրախային ցուցանիշը:

4 թանգարան համալրվել է 16 մշակութային արժեքներով, որոնցից առանձնակի կարևորություն ունի «Սոթբիս» հեղինակավոր աճուրդի տնից գնված աշխարհահռչակ հայ նկարիչ Արշիլ Գորկու «Անվերնագիր» գրաֆիկական աշխատանքը: Բացի այդ, ձեռք են բերվել 2 բացառիկ կարևորության մշակութային արժեքներ՝ 12-րդ դարի հնագույն գեղարվեստական կոթող հանդիսացող եկեղեցու փայտյա դռան փեղկը՝ Լոնդոնի գալերեայից և Մատենադարանի համար ձեռք բերված 12-րդ դարի մեծագույն գործիչ Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն յոթ Կաթողիկէ թղթոց» աշխատությունը՝ Ավստրիական հին և հազվագյուտ գրքերի ու ձեռագրերի INLIBRIS Gilhofer Nfg մասնագիտացված ընկերության կազմակերպած աճուրդից: Ընդհանուր առմամբ, թանգարանային հավաքածուների համալրման համար պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 332 մլն դրամ, ինչը գրեթե 29 անգամ գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը:

Մշակութային կրթության խթանման համատեքստում էապես բարելավվել են «Դպրոցական բաժանորդային համակարգ» ծրագրի շրջանակում այցելությունները թանգարաններ և թատրոններ՝

շուրջ 357,300, որից թանգարաններ է այցելել ավելի քան 159,600, թատրոններ՝ շուրջ 197,700 աշակերտ:

Մշակութային ժառանգության ոլորտում 2025թ. կապիտալ ներդրումներ են արվել 21 թանգարաններում և պատկերասրահներում՝ շենքային պայմանների բարելավման և գույքով հագեցման համար:

Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման և հանրահռչակման ուղղությամբ 36.1 մլն դրամ պետական ֆինանսավորմամբ ՀՀ 8 մարզերի 35 համայնքներում իրականացվել են 11 ծրագրեր, այդ թվում՝ 2025թ. Գավառ համայնքում անցկացված Արհեստների միջազգային փառատոնը, որի մասնակիցների թիվը կազմել է շուրջ 12,000՝ նախորդ տարիների 2,000-3,000 ցուցանիշի համեմատ:

Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանություն

2025թ. իրականացվել են 19 հուշարձանների՝ ամրակայման, նորոգման և վերականգնման, 5 հուշարձանների ուսումնասիրման, հետախուզումների և պեղումների աշխատանքներ, որի համար ՀՀ պետական բյուջեից 2025թ. հատկացվել է 1.4 մլրդ դրամ՝ գերազանցելով 2024թ. նույն ցուցանիշը 72.9%-ով:

Պետություն-մասնավոր համագործակցությամբ վերականգնվել է 8 հուշարձան, որից մեկի աշխատանքներն ավարտվել են, 7-ի աշխատանքները շարունակվում են 2026թ.: Վերականգնված հուշարձանը հանրապետական նշանակության՝ Երևանի «Կարմիր կամուրջ» հուշարձանն է, որը Երևանում պահպանված ամենահին կամուրջն է:

Մշակույթի ոլորտի քաղաքականության գերակայություններից մեկը միջազգային հարթակներում հայկական մշակութային հուշարձանների հանրահռչակումն է: Այս համատեքստում 2025թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախնական ցանկում են ընդգրկվել 2՝ «Երևանի ուրարտական ժառանգությունը» և «Գառնու տաճարի հուշարձանախումբ և «Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ» հայտերը:

Հատուկ ուշադրություն է դարձվել որմնանկարների վերականգնմանը. իրականացվել են Շատիվանք վանական համալիրի Սբ. Աստվածածին եկեղեցու որմնանկարի գիտանախագծային փաստաթղթերի կազմման աշխատանքները, Երևան քաղաքի Կառավարության շենքի 3-րդ հարկից գեղանկարիչ Մինաս Ավետիսյանի 2 որմնանկար տեղափոխվել է Հայաստանի ազգային պատկերասրահի Շիրակի մարզի Ջաջուռ գյուղում գտնվող «Մինաս Ավետիսյան մասնաճյուղ» թանգարան և տեղում ամրակայվել:

2.2.13.1.1.4. Սպորտ

2025թ. սպորտի ոլորտում առաջնահերթությունները նպատակաուղղված են սպորտի տնտեսականացմանը, պետություն-մասնավոր համագործակցության ընդլայնմանը, ոլորտի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը, բարձր նվաճումներ ունեցող մարզիկների խրախուսմանը, զանգվածային սպորտային միջոցառումների կազմակերպմանը և ֆիզիկական առողջ ակտիվության խթանմանը, սպորտում պետության միջազգային հեղինակության բարձրացմանը և մարզական ենթակառուցվածքների ստեղծմանը (բարելավմանը): Ոլորտային քաղաքականությունն արտացոլված է ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների 2024-2030թթ. զարգացման ռազմավարության մեջ, համահունչ է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրին:

Հայաստանում մեծ սպորտի շարունակական զարգացման և միջազգային հարթակներում ՀՀ դիրքի բարելավման համար պետական բյուջեից փաստացի ֆինանսավորումը կազմել է 5.2 մլրդ դրամ, որի շրջանակում շարունակվել են բարձր նվաճումներ ունեցող մարզիկների խրախուսման ծրագրերը, ինչպես նաև ներդրվել են նոր ծրագրեր:

Ոլորտի գերակա ուղղություններից մեկը ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստումը և առաջնությունների անցկացումն է: Այս ուղղությամբ պետական աջակցության ծրագրում ընդգրկված 35 մարզական ֆեդերացիաներն անցկացրել են ՀՀ 100 առաջնություն, 141 ուսումնամարզական հավաք և մասնակցել 174 միջազգային մրցաշարերի: ՀՀ կառավարության 2025թ. հուլիսի 17-ի N 963-Ն որոշմամբ ներդրվել է «Լոս Անջելես 2028» օլիմպիական խաղերին նախապատրաստվելու աջակցության ծրագիրը, որի համաձայն 2026թ. հունվարից մինչև 2028թ. օգոստոս սպորտային նպաստ կտրամադրվի մարզիկներին, հավաքականների մարզիչներին, անձնական մարզիչներին, բժիշկներին և մերսողներին՝ հնարավորություն ընձեռելով կենտրոնանալ մարզիկների լավագույն մարզավիճակի վրա:

2025թ. ՀՀ մարզիկները նվաճել են 357 մեդալ, որից 114-ը ոսկե, 113-ը արծաթե և 130-ը բրոնզե: Մեդալներից 42-ը կամ 12%-ը նվաճել են կանայք: 2024թ. սկսած նվաճած մեդալների համամասնության մեջ գերակշռում են ոսկե մեդալները՝ կազմելով 32%, և կրկնապատկվել են կին մարզիկների նվաճած մեդալները: Հաշմանդամություն ունեցող մարզիկները նվաճել են 37 մեդալ: Հաշվետու տարում ըմբշամարտ և ծանրամարտ մարզաձևերից գրանցվել է 2 աշխարհի չեմպիոն: Ընդհանուր առմամբ, մինչև 2030թ. պլանավորվում է թիրախային ցուցանիշը հասցնել 8-ի:

ՀՀ կառավարության 2015թ. օգոստոսի 13-ի № 925-Ն որոշման հիման վրա տարվա ընթացքում տարբեր մարզաձևերից 120 մարզիկ և մարզիչ ստացել են պատվովճարներ:

2025թ. ցուցաբերած մարզական արդյունքների համար անվանական թոշակ է հատկացվել (այդ թվում նաև վարկանիշի ձեռք բերման համար) 432 մարզիկների, մարզիչների և բժիշկների: Միանվագ տարեվերջյան պարգևատրում է ստացել 189 մարզիկ, մասնավորապես՝ 50 մարզիկ ստացել է մինչև 500,000 դրամ, 31 մարզիկ՝ մինչև 1 մլն դրամ և 108 մարզիկ՝ 1 մլն դրամից ավելի գումար՝ տարվա ընթացքում իրենց գրանցած հաղթանակների համար:

Բնակչության տարբեր տարիքային խմբերի համար զանգվածային սպորտի տարածման, առողջ ապրելակերպի քարոզման, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացման անընդհատության ապահովման նպատակով 2025թ. պետական բյուջեից հատկացումը կազմել է 3.2 մլրդ դրամ՝ գրանցելով 62.5% աճ 2024թ. համեմատ:

Կազմակերպվել են «ՀՀ վարչապետի գավաթ» խորագրով դպրոցականների 6 մարզաձևերի մրցաշարեր՝ հեծանվավազքի, սեղանի թենիսի, թիմային խճուղավազքի, լողի, վոլեյբոլի, բասկետբոլի, որոնց մասնակցել է շուրջ 24,000 երեխա: Գրանցած ցուցանիշը 4.2 անգամ գերազանցում է ոլորտի ռազմավարությամբ 2030թ. սահմանված թիրախը:

Ընդ որում, 2025թ. ՀՀ վարչապետի գավաթի մրցաշարերը լրացվել են ևս 2 խաղային ձևերով՝ «Դպրոցականների բասկետբոլի լիգայով» և «Դպրոցականների վոլեյբոլի լիգայով», իսկ մինչ այդ իրականացվող «Վարչապետի գավաթ. սիրողական լողի» մրցաշարը վերափոխվել է «Դպրոցականների շրջանում անցկացվող լողի մրցաշարի»:

ՀՀ վարչապետի հովանու ներքո անցկացվել են նաև ուժային կառույցների միջև բանակային խաղերը, որոնց մասնակցել է ուժային և իրավապահ կառույցների 306 աշխատակից:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025թ. փետրվարի 20-ի N 563-Ա/2 հրամանի համաձայն՝ 2025թ. առաջին անգամ հաշվարկվել և հրապարակվել է մարզերի և Երևանի մարզական վարկանիշային սանդղակը, որով գնահատվում է մարզական ակտիվությունը՝ ըստ մի շարք ցուցանիշների: Սանդղակի առաջին երեք տեղերը զբաղեցնողները ստացել են համապատասխանաբար 8, 5 և 3 մլն դրամ արժողությամբ մարզագույք:

2025թ. գերակա ուղղություններից է նաև սպորտի տնտեսականացումը: Այս համատեքստում իրականացվել են Եղեգնաձոր, Մարտունի և Արարատ քաղաքներում պետություն-մասնավոր գործընկերությամբ արդիական մարզագույքով և այլ պայմաններով հագեցած, միջազգային չափանիշներին համապատասխանող տիպային մարզահամալիրների նախագծման աշխատանքները: Նախատեսվում է, որ մարզահամալիրները կկառուցվեն պետության միջոցներով՝ հանձնվելով մասնավորին հետագա հավատարմագրային կառավարման՝ հստակ չափորոշիչներով:

Պետություն-մասնավոր համագործակցության շրջանակներում ընդլայնվել է 2024թ. մեկնարկած՝ մասնավոր լողավազաններում դպրոցահասակ երեխաների լողի պարապմունքների պետական ֆինանսավորման ծրագիրը, որի շահառուների թիվը 2025թ. կազմել է 198՝ մեկնարկային տարվա 22 շահառուի փոխարեն՝ հասանելի դառնալով Արագածոտնում, Արմավիրում, Կոտայքում, Տավուշում և Լոռիում: Միաժամանակ, 2025թ. «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքում իրականացվել են փոփոխություններ, որոնք հնարավոր են դարձրել մասնավորի ենթակառուցվածքներում նաև այլ մարզաձևերով զբաղվելը խթանելը:

Սպորտի ոլորտում ենթակառուցվածքների զարգացման համատեքստում տարբեր միջոցառումների շրջանակներում 2025թ. իրականացվել են մի շարք մարզադպրոցների և մարզահամալիրների վերակառուցման ու կառուցման, նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ: 2025թ. առաջին անգամ կառուցվել է 10 սթրիթ վորքաութ մարզահրապարակ, որից 2-ական՝ Գեղարքունիքի և Վայոց ձորի, 3-ական՝ Սյունիքի և Տավուշի մարզերում:

2029թ. Հայաստանում կայանալիք ֆուտբոլի աշխարհի երիտասարդական առաջնությանն ընդառաջ՝ 2025թ. Իջևան համայնքի Գետահովիտ բնակավայրի վարչական տարածքում ՈՒԵՖԱ-ի ստանդարտներով ֆուտբոլի մարզադաշտի կառուցման համար անհրաժեշտ հողամասերի ձեռքբերման նպատակով հատկացվել է 329.9 մլն դրամ գումար: Մարզադաշտը կծառայի որպես ոչ միայն սպորտային, այլև՝ բազմաֆունկցիոնալ կենտրոն՝ նպաստելով համայնքների ակտիվացմանը, տուրիստական հոսքերի աճին և տնտեսական զարգացմանը:

2025թ. առաջին անգամ իրականացվել է ՀՀ մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստում՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2025թ. հուլիսի 3-ի N 889-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման կազմակերպման ծրագիրը»:

2.2.13.1.1.5. Երիտասարդություն

2025թ. մարտին ընդունվել է ոլորտը կարգավորող առաջին շրջանակային փաստաթուղթը՝ «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է պետական երիտասարդական քաղաքականության առաջնահերթությունները, քաղաքականության սուբյեկտները, նրանց լիազորությունների տիրույթը, փոխհարաբերությունների հիմունքները:

2025թ. ամբողջ ծավալով իրականացվել են ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրում երիտասարդական քաղաքականության մասով ամրագրված ծրագրերն ու միջոցառումները: Պետական բյուջեից ոլորտին փաստացի ֆինանսավորումը կազմել է 2.4 մլրդ դրամ, որն ուղղվել է մարզաբնակ երիտասարդների ներուժի բացահայտմանը, կարողությունների զարգացմանը և ինտելեկտուալ ժամանցի կազմակերպման միջավայրերի (կենտրոնների) ձևավորմանը: Այս համատեքստում շարունակվել է առաջնահերթություն լինել դեռևս 2022թ. ի վեր մեկնարկած՝ պետություն-քաղաքացիական հասարակություն-տեղական ինքնակառավարման մարմին եռակողմ համագործակցության ձևաչափով մարզերում երիտասարդական կենտրոնների ձևավորման գործընթացը, որի շրջանակներում 2025թ. դրամաշնորհներ են տրամադրվել ևս 5 բնակավայրերում երիտասարդական կենտրոնների ձևավորման համար: 2025թ. դրությամբ պետական ֆինանսավորմամբ հիմնադրված կենտրոնների թիվը կազմել է 13: Թիրախային ցուցանիշի համաձայն՝ մինչև 2026թ. նախատեսվում է հիմնել 25 երիտասարդական կենտրոն:

Շարունակվել է «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը, որի շրջանակում 2010-2025թթ. ընթացքում պետական նպատակային ծրագրի հնարավորություններից օգտվել է 9,905 ընտանիք, որից 3,967-ը՝ Երևան քաղաքում, իսկ 5,938-ը՝ ՀՀ մարզերում: 2025թ. ծրագրի շահառուների թիվը համալրվել է 760 ընտանիքով, որոնցից 689-ը բնակարան/բնակելի տուն ձեռք է բերել պետական սուբսիդավորմամբ՝ երկրորդային շուկայից, որոնցից 511-ը՝ ՀՀ մարզերում, 178-ը՝ Երևանում: 2027թ. թիրախային ցուցանիշը նախատեսվում է հասցնել շուրջ 11,500-ի:

2025թ. շարունակվել են սոցիալական ձեռներեցության, հայրենաճանաչության, թրաֆիքինգի, երիտասարդական աշխատանքի թեմաներով տեղական, համապետական և միջազգային մակարդակով երիտասարդների կարողությունների զարգացման, իրազեկման, ինչպես նաև ավիատոմսի ծախսի փոխհատուցման ճանապարհով միջազգային միջոցառումներին Հայաստանի երիտասարդների մասնակցության հնարավորությունների ընդլայնման տարաբնույթ ծրագրեր, որոնց շրջանակում իրականացվել է 12 միջոցառում՝ շուրջ 22,622 երիտասարդի մասնակցությամբ:

2.2.13.1.1.6. Սփյուռքի հետ կապեր

Հայաստան-Սփյուռք փոխհամագործակցության շրջանակում կարևոր տեղ են զբաղեցնում կրթության և մշակույթի ոլորտները, ինչպես նաև հայագիտության զարգացման հեռանկարային հնարավորությունները:

Այս առումով առաջնային նշանակություն ունեն օտարերկրյա պետություններում գործող սփյուռքի կրթօջախների, այդ թվում՝ օտարերկրյա պետություններում գործող հայագիտական կենտրոնների գործունեությունը և կայուն զարգացումը:

Այս համատեքստում շարունակվել է օտարերկրյա համալսարաններում հայերենի և այլ հայագիտական առարկաների դասավանդման ծրագիրը, որը տարեվերջին ընդգրկել է արտերկրի 11 պետության 14 հայագիտական կենտրոններ, 19 դասավանդողներ և շուրջ 200 ուսանողներ:

Շարունակվել են նաև սփյուռքի դպրոցների ուսումնական նյութերի էլեկտրոնային շտեմարանի հարստացման աշխատանքները: Սփյուռքի 25 երկրի կրթօջախներից ստացված ուսումնական նյութերի ձեռքբերման 140 հայտից բավարարվել է 129-ը: Ձեռք է բերվել 46,224 կտոր ուսումնական գրականություն և տրամադրվել է 23 պետության 220 կրթօջախի, այդ թվում՝ Վրաստանի կրթության, գիտության և երիտասարդության նախարարությանը փոխանցվել է 8,525 կտոր գրականություն: Ձեռքբերված ուսումնական գրականության քանակը նախորդ տարվա համեմատ աճել է 113.3%-ով:

2025թ. ընթացքում Հայաստանում վերապատրաստվել են 62 սփյուռքահայ ուսուցիչներ՝ 8 երկրից: 2027թ. համար նախատեսվում է թիրախային ցուցանիշը առնվազն կրկնապատկել:

«Հայաստանի միգրանտ ընտանիքների դպրոցականների հայոց լեզվի իմացության բարելավում» միջոցառման շրջանակում 205 աշակերտ, նախորդ տարվանից գրեթե կրկնակի ավելի, հնարավորություն է ստացել սովորել հայոց լեզու:

2.2.13.1.2. ԿԳՄՍՆ բյուջեի կատարման ամփոփ նկարագիր

2.2.13.1.2.1. Ծախսերի ամփոփագիր

ԿԳՄՍՆ ծախսերի կատարողականը՝ 93.5%:

Աղյուսակ 1. 2025թ. ԿԳՄՍՆ ծրագրերը և միջոցառումները

	Հաստատ-ված	Ճշտված	Փոփոխության բացատրություն	Փաստ
Ծրագիր (հատ)	24	24		24
Միջոցառում (հատ)	218	242	Միջոցառումները հիմնականում ավելացվել են կրթության, մշակույթի և արտադպրոցական հաստատությունների շենքային պայմանների բարելավման, համայնքներում կառուցվող մարզական ենթակառուցվածքների համար հողատարածքների ձեռքբերման, թանգարանների նոր շենքերի և «Վորքաութ» տեսակի մարզահրապարակների կառուցման, աշխարհահռչակ հայ արվեստագետների հոբելյանական միջոցառումների իրականացման, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտներին առնչվող անշարժ գույքի ձեռքբերման և մի շարք այլ միջոցառումների իրականացման նպատակով: Միջոցառումները հիմնականում նվազեցվել են՝ պայմանավորված թեթև կոնստրուկցիաներով մարզադահլիճների հիմնման, կինոարտադրության ներդրումների վերադարձման, հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանների աշակերտների ռազմամարզական ճամբարի կազմակերպման, «ՀՀ Վարչապետի գավաթ» սիրողական խճուղավազքի մրցաշարի անցկացման և մի շարք այլ միջոցառումների վերանայմամբ:	234
Հատկացում (մլն դրամ)	362,664.4	400,232.4	Լրացուցիչ միջոցները հիմնականում հատկացվել են՝ հանրակրթական դպրոցների շենքերի վերակառուցման, հիմնանորոգման, հանրակրթական դպրոցների նոր շենքերի կառուցման, հանրակրթական դպրոցների, մանկապարտեզների և կրթահամալիրների գույքով և տեխնիկայով ապահովման, ՀՀ դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման, կամավոր ատեստավորման համակարգի ներդրման՝ ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը, ընդհանուր հանրակրթության, գիտական ենթակառուցվածքի արդիականացման և մի շարք այլ միջոցառումներին, ինչպես նաև վերը նշված նոր միջոցառումներին: Հիմնականում նվազեցվել են՝ մանկապարտեզների շենքերի վերակառուցման, նոր շենքերի կառուցման, հիմնանորոգման, հանրակրթական դպրոցների նոր շենքերի կառուցման, գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ)	374,398.9

			հետազոտությունների, կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովման, նախնական և միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների և կրթաթոշակների տրամադրման, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների և կրթաթոշակների տրամադրման, ՀՀ գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող պետական ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչներին հավելավճարի սահմանման և մի շարք այլ միջոցառումներին հատկացված միջոցները:	

Գծապատկեր 1. 2025թ. ԿԳՄՄՆ փաստացի ծախսերի կառուցվածքն ըստ միջոցառումների տեսակների (մլն դրամ և տեսակարար կշիռները ԿԳՄՄՆ ծախսերում)



Ծանոթագրություն. Հանրության կողմից անմիջականորեն օգտագործվող ակտիվների հետ կապված միջոցառումների գծով ծախսերը կազմել են 1.6 մլրդ դրամ, պետական մարմինների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների գծով ծախսերը՝ 90.3 մլն դրամ:

Աղյուսակ 2. 2025թ. ԿԳՄՄՆ ծրագրերը և միջոցառումները՝ ըստ ճշտված պլանի կատարողականի (հատ)

	Ընդամենը	≥90% (բարձր)	75–89% (բավարար)	50–74% (միջին)	<50% (անբավարար)
Ծրագրեր	24	17	5	2	-
Միջոցառումներ	242	157	39	30	16

2.2.13.1.2.2. Ֆինանսական ակտիվներ

2025թ. նախարարության ֆինանսական ակտիվների գծով ելքերը, որոնք կազմել են 106.8 մլն դրամը, ուղղվել են բաժնետոմսերի ձեռքբերմանը՝ «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի տնտեսական զարգացման խթանման նպատակով, որը կատարվել է նախատեսված ծավալով:

2.2.13.1.2.3. Պետական տուրքեր և այլ եկամուտներ

Աղյուսակ 3. 2025թ. ԿԳՄՄՆ և նրան ենթակա պետական մարմինների կողմից գանձված պետական տուրքերը և այլ եկամուտները (մլն դրամ)

	Ճշտված պլան	Փաստ	Կատարողական ճշտված պլանի նկատմամբ (%)

Պետական տուրքեր	47.5	43.2	91.0
Այլ եկամուտներ	-	3.5	x

«x» - ցուցանիշը կիրառելի չէ

2.2.13.1.3.Ծախսերի կատարման վերլուծություն

ԿԳՄՍՆ ծախսը՝ 374.4 մլրդ դրամ, կատարողականը՝ 93.5%:

Աղյուսակ 4. ԿԳՄՍՆ բյուջետային ծրագրերը (մլն դրամ)

Ծրագրեր	2024թ. փաստ	2025թ. ճշտված պլան	2025թ. փաստ	Կատարողա-կան ճշտված պլանի նկատմամբ (%)	2025թ. 2024թ.-ի նկատմամբ (%)	2025թ. և 2024թ. տարբե-ությունը
ԸՆԴԱՄԵՆԸ	**285,653.9**	**400,232.4**	**374,398.9**	**93.5**	**131.1**	**88,745.0**
Մեծ նվաճումների սպորտ	5,383.1	10,215.4	5,225.5	51.2	97.1	(157.6)
Հանրակրթության ծրագիր	126,642.7	137,197.1	136,310.7	99.4	107.6	9,668.1
Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր	32,074.7	30,962.7	30,009.1	96.9	93.6	(2,065.6)
Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում	29,971.2	111,512.9	100,787.5	90.4	336.3	70,816.3
Այլ ծրագրեր	91,582.2	110,344.3	102,066.2	92.5	111.4	10,483.9

ԿԳՄՍՆ պատասխանատվության ներքո 2025թ. իրականացվել են 24 ծրագրեր, որոնց շրջանակներում օգտագործվել է շուրջ 374.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 93.5% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնման, կառուցման, բարելավման և Մեծ նվաճումների սպորտի ծրագրերի կատարողականով: Նախորդ տարվա ցուցանիշի համեմատ նախարարության ծախսերի 31.1% (88.7 մլրդ դրամ) աճը հիմնականում պայմանավորված է Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնման, կառուցման, բարելավման ծրագրի ծախսերի՝ 3.4 անգամ (70.8 մլրդ դրամ) և Հանրակրթության ծրագրի ծախսերի՝ 7.6% (9.7 մլրդ դրամ) աճով:

2025թ. ընթացքում ավելի քան 5.2 մլրդ դրամ է տրամադրվել *«Մեծ նվաճումների սպորտ»* ծրագրին՝ ապահովելով 51.2% կատարողական: Ծրագրված ցուցանիշից շեղումը հիմնականում պայմանավորված է «Հայաստանում Ֆրանկոֆոնիայի խաղերի անցկացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ապահովում» միջոցառմանը հատկացված 4.6 մլրդ դրամ միջոցները չօգտագործելու հանգամանքով: Հայաստանում Ֆրանկոֆոնիայի խաղերի կազմակերպման և անցկացման շրջանակում՝ ենթակառուցվածքների գույքագրման և ուսումնասիրության, ինչպես նաև խաղերի ցանկի և միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ գույքի տեխնիկական բնութագրերի ճշգրտման գործընթացներով պայմանավորված՝ հաշվետու տարում համապատասխան շինություն չի ընտրվել, գնումների մրցույթներ չեն հայտարարվել և պայմանագրեր չեն կնքվել: Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերը նվազել են 2.9%-ով կամ 157.6 մլն դրամով, ընդ որում, առանձին միջոցառումների ծախսերում արձանագրվել են ինչպես զգալի աճեր, այնպես էլ նվազումներ, բացի այդ, 2024թ. ֆինանսավորված որոշ միջոցառումներ 2025թ. չեն նախատեսվել:

«ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում» միջոցառման շրջանակներում 2025թ. Հայաստանում գործող 35 ֆեդերացիաների կողմից կազմակերպվել են ՀՀ 100 առաջնություններ (նախատեսված 103-ի դիմաց), որոնց մասնակցել է 9,440 մասնակից (նախատեսված 9,600-ի դիմաց)՝ 2024թ. 98 առաջնության և 9,340 մասնակցի դիմաց: Կազմակերպվել է նաև 141 ուսումնամարզական հավաք (նախատեսված 144-ի դիմաց) 2,728 մասնակցով՝ 2024թ. համապատասխանաբար 140-ի և 2,716-ի դիմաց, ինչպես նաև 174 միջազգային միջոցառում (նախատեսված 184-ի դիմաց) 2,418 մասնակցով՝ 2024թ. 180 միջոցառման և 2,323 մասնակցի դիմաց: Պետական աջակցության ծրագրում ընդգրկված ֆեդերացիաների մարզիկները 2025թ. մեծահասակների, երիտասարդների և պատանիների Եվրոպայի և աշխարհի առաջնություններում նվաճել են 357 մեդալ, այդ թվում՝ 114 ոսկե, 113 արծաթե և 130 բրոնզե մեդալ: 2025թ. ըմբշամարտ և ծանրամարտ մարզաձևերում Հայաստանի մարզիկները նվաճել են 2 աշխարհի չեմպիոնի կոչում: ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման ծախսերը կազմել են շուրջ 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերը նվազել են 7.2%-ով կամ 113.8 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է միջազգային միջոցառումների թվի նվազմամբ:

2025թ. «Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին անվանական թոշակի հատկացում» միջոցառման համար նախատեսված 835.7 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ և նախորդ տարվա համեմատ նվազել է 18.1%-ով կամ 184.1 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված անվանական թոշակ ստացողների և հաշվետու տարում բարձր արդյունքներ գրանցած մարզիկների թվի նվազմամբ:

Հայաստանում խոշոր մրցաշարերի, աշխարհի և Եվրոպայի առաջնությունների կազմակերպման և անցկացման միջոցառման շրջանակներում իրականացվել են՝ կարատեի Եվրոպայի մեծահասակների 60-րդ առաջնությունը՝ 49 երկրների մասնակցությամբ, բասկետբոլի Եվրոպայի մինչև 20 տարեկանների Բ դիվիզիոնի առաջնությունը՝ 21 երկրի մասնակցությամբ, ինչպես նաև վոլեյբոլի Եվրոպայի երիտասարդների առաջնության եզրափակիչ փուլը՝ 16 երկրների մասնակցությամբ: Նշված միջոցառման գծով ծախսերը կազմել են ավելի քան 788.3 մլն դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 85% կատարողական: Շեղումը պայմանավորված է միջոցառումների անցկացման ծախսերի տնտեսմամբ: 2024թ. պետական բյուջեում նշված միջոցառումը նախատեսված չէր:

2025թ. շուրջ 698 մլն դրամ է տրամադրվել «Միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնում» միջոցառմանը՝ ապահովելով 97.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 20.1%-ով կամ 175.9 մլն դրամով՝ պայմանավորված հաղթողների և մրցանակակիրների թվի փոփոխությամբ:

2025թ. «Սպորտային միջոցառումների կազմակերպում» միջոցառման շրջանակում հատկացված 326.7 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է և տրամադրվել «Սպորտի կառավարման կենտրոն» ՓԲԸ-ին, որը զբաղվել է սպորտային առաջնությունների և միջոցառումների կազմակերպմամբ, ինչպես նաև մարզման չափորոշիչներին համապատասխան ուսումնամարզական ծրագրերի իրականացմանն աջակցությամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 10.7 անգամ կամ 296.2 մլն դրամով՝ պայմանավորված կենտրոնի ամբողջական տարվա

գործունեությամբ, քանի որ այն ստեղծվել էր ՀՀ կառավարության 2024թ. մայիսի 16-ի N 713-Ա որոշմամբ:

«Մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական կազմակերպություններին գույքով ապահովում» միջոցառման շրջանակներում գույք է հատկացվել 7 մարզակառույցի, բացի այդ, ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված՝ ՀՀ մարզերի և Երևանի մարզական վարկանիշային սանդղակի ձևավորման կարգով մարզագույքի որոշ տեսակներ են հատկացվել 76 հանրակրթական դպրոցի և մարզադպրոցի: Միջոցառման գծով ծախսերը կազմել են 294.9 մլն դրամ՝ ապահովելով 60.2% կատարողական: Շեղումը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսմամբ, ինչպես նաև մի շարք ապրանքների մասով մատակարարների կողմից պայմանագրային պարտավորությունների ոչ լիարժեք կատարմամբ: Նախորդ տարվա համեմատ միջոցառման ծախսերն աճել են 25%-ով կամ 58.9 մլն դրամով՝ պայմանավորված ձեռքբերված գույքի արժեքների աճով:

«Եվրոպայի երիտասարդության օլիմպիական փառատոներին մասնակցության ապահովում» միջոցառման շրջանակում 2025թ. 12 հայ մարզիկ 4 մարզաձևով մասնակցել են Վրաստանում կայացած Եվրոպական ձմեռային օլիմպիական փառատոնին, 31 մարզիկ՝ 7 մարզաձևով՝ Մակեդոնիայի Սկոպյե քաղաքում անցկացված Եվրոպական ամառային օլիմպիական փառատոնին: Միջոցառման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ՝ կազմելով շուրջ 49.5 մլն դրամ:

2025թ. «Հավաքական թիմերի մարզական կենտրոն» ՓԲԸ-ին հատկացվել է 108.2 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է ընկերության ֆինանսական կայունության ապահովման, կուտակված կրեդիտորական պարտավորությունների մարման, գույքի պահպանության, ինչպես նաև հրատապ վերանորոգման և բարեկարգման աշխատանքների իրականացման նպատակով: 2024թ. պետական բյուջեում նշված նպատակով միջոցներ չէին նախատեսվել:

Հանրակրթության ծրագրի շրջանակներում 2025թ. օգտագործվել է ավելի քան 136.3 մլրդ դրամ՝ ապահովելով 99.4% կատարողական: Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերն աճել են 7.6%-ով կամ 9.7 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված ընդհանուր հանրակրթության ծախսերի աճով:

2025թ. ընդհանուր հանրակրթական ուսումնական կրթություն է իրականացվել 1,326 պետական ուսումնական հաստատություններում՝ 2024թ. 1,332-ի դիմաց: Ընդհանուր հանրակրթության ծախսերը 2025թ. կատարվել են 99.9%-ով՝ կազմելով 122.7 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ ընդհանուր հանրակրթական ուսուցման ծախսերն աճել են 7.8%-ով կամ 8.8 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է դասարանների թվի աճով:

Աղյուսակ 5. Ընդհանուր հանրակրթության համակարգի ցուցանիշները

	2024թ. գործող դասարանների թիվ	2025թ. գործող դասարանների թիվ	2025թ. և 2024թ. դասարանների թվի տարբե-րություն	2024թ. փաստացի ծախս (մլն դրամ)	2025թ. փաստացի ծախս (մլն դրամ)	2025թ. 2024թ.-ի համեմատ (%)
Ընդհանուր հանրակրթություն	**20,797**	**20,968**	**171**	**113,850.2**	**122,695.1**	**107.8**
Տարրական	7,473	7,340	(133)	40,124.4	42,527.7	106.0
Հիմնական	9,307	9,319	12	50,818.4	53,900.3	106.1
Միջնակարգ	4,017	4,309	292	22,907.4	26,267.1	114.7

Հանրակրթության համակարգում 2025թ. գործել է 6 հատուկ դպրոց՝ 2024թ. 7-ի դիմաց: Հատուկ հանրակրթությանը հատկացված միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ՝ կազմելով ավելի քան 1.2 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 0.9%-ով կամ 10.5 մլն դրամով:

Աղյուսակ 6. Հատուկ հանրակրթության համակարգի ցուցանիշները

	2024թ. գործող դասարանների թիվ	2025թ. գործող դասարանների թիվ	2025թ. և 2024թ. դասարանների թվի տարբերություն	2024թ. փաստացի ծախս (մլն դրամ)	2025թ. փաստացի ծախս (մլն դրամ)	2025թ. 2024թ.-ի համեմատ (%)
Հատուկ հանրակրթություն	**79**	**78**	**(1)**	**1,224.2**	**1,213.7**	**99.1**
Տարրական	24	26	2	341.0	358.8	105.2
Հիմնական	34	34	0	512.2	507.7	99.1
Միջնակարգ	21	18	(3)	371.0	347.2	93.6

2025թ., ինչպես և 2024թ., մասնագիտացված կրթության համակարգում գործել է 10 մասնագիտացված դպրոց: Հաշվետու տարում տարրական, հիմնական և միջնակարգ մասնագիտացված հանրակրթական ուսուցման նպատակով օգտագործվել է շուրջ 3.9 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 98%-ը: Նախորդ տարվա համեմատ տարրական, հիմնական և միջնակարգ մասնագիտացված հանրակրթական ուսուցման ծախսերն աճել են 3.4%-ով կամ 129.8 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված դասարանների թվի աճով:

Աղյուսակ 7. Մասնագիտացված հանրակրթության համակարգի ցուցանիշները

	2024թ. գործող դասարանների թիվ	2025թ. գործող դասարանների թիվ	2025թ. և 2024թ. դասարանների թվի տարբերություն	2024թ. փաստացի ծախս (մլն դրամ)	2025թ. փաստացի ծախս (մլն դրամ)	2025թ. 2024թ.-ի համեմատ (%)
Մասնագիտացված հանրակրթություն	**174**	**192**	**18**	**3,768.6**	**3,898.4**	**103.4**
Տարրական	12	14	2	232.7	246.9	106.1
Հիմնական	86	91	5	1,607.8	1,542.6	95.9
Միջնակարգ	76	87	11	1,928.1	2,108.9	109.4

Հանրակրթական դպրոցներում ուսումնական գործընթացի արդյունավետության ապահովման ու բարձրացման նպատակով ուսումնադիդակտիկ պարագաների ապահովման նպատակով ձեռք է բերվել տարրական դասարանների 844,776 դասագրքեր և տետրեր՝ կանխատեսված 906,000-ի և նախորդ տարվա 853,027-ի դիմաց: «Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում» միջոցառման ծախսերը կազմել են ավելի քան 1.2 մլրդ դրամ՝ ապահովելով 79.2% կատարողական: Ծրագրված ցուցանիշից ծախսերի շեղումը և փաստացի ցածր արդյունքային ցուցանիշները հիմնականում պայմանավորված են մի շարք դասագրքերի և տետրերի փաստացի կարիքներով, ինչպես նաև իրականացված դասագրքերի փոխանակությունների փաստացի ծավալով: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 6%-ով կամ 70 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է դասագրքերի և տետրերի հարաբերական տեսակարար կշիռների փոփոխությամբ:

ՀՀ գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող պետական ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչներին հավելավճարի սահմանման միջոցառման շրջանակներում 2025թ. հավելավճար է տրամադրվել 3,278 ուսուցչի՝ կանխատեսված 3,119-ի և նախորդ տարվա 3,778–ի դիմաց: Միջոցառման ծախսերը կազմել են շուրջ 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով 88.2% կատարողական, որը հիմնականում պայմանավորված է միջոցառման շահառու հանդիսացող ուսուցիչների դրույքաչափերով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 2.6%-ով կամ 39.3 մլն դրամով:

2025թ. ընթացքում 30 մլրդ դրամ է տրամադրվել *Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների* ծրագրին՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 96.9%-ը: Նախորդ տարվա համադրելի ցուցանիշի համեմատ[Error! Bookmark not defined.] ծրագրի ծախսերը նվազել են 5%-ով կամ 1.6 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված գիտական կենտրոնների ժամանակակից սարքավորումներով վերազինման ու համատեղ օգտագործման գիտական սարքավորումների կենտրոնների ստեղծման, արհեստական բանականության գիտահետազոտական կենտրոնի արդիականացման և ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության էկոհամակարգի ձևավորման և զարգացման ծախսերի նվազմամբ:

Գիտական ենթակառուցվածքների արդիականացման միջոցառման նպատակներն են՝ գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների զարգացումը, ծրագրերի իրականացումը, գիտական սարքավորումների արդիականացումը, միջազգային համագործակցությանն աջակցությունը: Միջոցառման շրջանակներում 2025թ., ինչպես և 2024թ., ներգրավված է եղել 57 կազմակերպություն: Ստեղծվել է 15 հանձնախումբ՝ փորձաքննությունների աշխատանքների կազմակերպման համար, որոնց միջոցով իրականացվել է 963 գիտական հայտի փորձաքննություն՝ կանխատեսված 700-ի և նախորդ տարվա 400-ի դիմաց: Միջոցառման գծով ծախսերը կազմել են ավելի քան 15 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 99.4%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.8%-ով կամ 406.2 մլն դրամով:

Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների միջոցառման շրջանակներում հաշվետու տարում ֆինանսավորվել են 778 գիտական թեմաներ՝ կանխատեսված 802-ի և 2024թ. 712-ի դիմաց: Միջոցառման շրջանակներում իրականացվել են՝ երիտասարդ (մինչև 35 տարեկան) գիտաշխատողների աջակցության ծրագրերի և հետազոտությունների ֆինանսավորում, «Արհեստական բանականություն և տվյալագիտություն», «Քվանտային տեխնոլոգիաներ», «Ռոբոտատեխնիկա», «Հասարակական գիտություններ», «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառների հետազոտություններ, կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված հետազոտություններ: Աջակցություն է ցուցաբերվել ասպիրանտներին և երիտասարդ հայցորդներին՝ հետազոտությունների իրականացման համար, ինչպես նաև գիտական խմբերի կամ լաբորատորիաների ամրապնդմանն ուղղված ծրագրերին, հեռավար լաբորատորիաների ստեղծմանը, կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված նախաձեռնություններին: Միջոցառման գծով ծախսերը կազմել են ավելի քան 8.2 մլրդ դրամ՝ ապահովելով 97.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 26.9%-ով կամ 1.7 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված թեմաների թվի ավելացմամբ:

Գիտական կենտրոնների ժամանակակից սարքավորումներով վերազինման ու համատեղ օգտագործման գիտական սարքավորումների կենտրոնների ստեղծման միջոցառման շրջանակներում 14 գիտական կենտրոն՝ նախատեսված 13-ի և նախորդ տարվա 17-ի դիմաց, վերազինվել են 39 սարքավորմամբ՝ նախատեսված 27-ի և 2024թ. 43-ի դիմաց: 2025թ ընթացքում սարքավորումներ են տրամադրվել ԵՊՀ կենսաբանության և քիմիայի ֆակուլտետներին,

Ա.Բ.Նալբանդյանի անվան ՀՀ ԳԱԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտին, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնին, ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտին, Ա.Թախտաջյանի անվան ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտին և այլ կենտրոնների: Միջոցառման գծով ծախսերը կազմել են շուրջ 1.9 մլրդ դրամ՝ ապահովելով 88.8% կատարողական: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ սարքավորումների մի մասի մատակարարումը հաշվետու տարում չի իրականացվել՝ մատակարարների կողմից պայմանագրային պարտավորությունների ոչ լիարժեք կատարման պատճառով: Նախորդ տարվա համեմատ միջոցառման ծախսերը նվազել են 52.9%-ով կամ 2.1 մլրդ դրամով՝ պայմանավորված ձեռքբերված սարքավորումների թվի և արժեքների նվազմամբ:

2025թ. շարունակվել է «Արհեստական բանականության գիտահետազոտական կենտրոնի արդիականացում» միջոցառումը, որի նպատակն է որակյալ ենթակառուցվածքի ստեղծումը՝ ուղղված արհեստական բանականության հետազոտությունների և նորարարությունների առաջմղմանը, տեխնոլոգիական առաջընթացի խթանմանը, ինչպես նաև տարբեր ոլորտներում բարդ խնդիրների լուծման մշակմանը: Միջոցառման շրջանակներում ձեռք է բերվել տվյալների կենտրոն (Datacenter), որի համար տրամադրվել է 883.2 մլն դրամ՝ ապահովելով 75% կատարողական: Շեղումը պայմանավորված է էլեկտրական սնուցման համակարգի ձեռքբերման մրցույթի չկայացմամբ: 2024թ. համեմատ միջոցառման շրջանակներում կատարված ծախսերը նվազել են 68.1%-ով կամ շուրջ 1.9 մլրդ դրամով՝ պայմանավորված 2024թ. բարձրարժեք գերհամակարգչի ձեռքբերմամբ:

Հաշվետու տարում 100.8 մլրդ դրամ է տրամադրվել «*Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրին*՝ ապահովելով 90.4% կատարողական և 3.4 անգամ կամ 70.8 մլրդ դրամով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրված ցուցանիշի նկատմամբ շեղումը և նախորդ տարվա համեմատ աճը հիմնականում պայմանավորված են հանրակրթական դպրոցների նոր շենքերի և կրթահամալիրների կառուցման ու հանրակրթական դպրոցների շենքերի վերակառուցման, հիմնանորոգման միջոցառման գծով կատարված ծախսերով: Ծրագրի կատարողականը պայմանավորված է նաև մանկապարտեզների նոր շենքերի կառուցման ու հանրակրթական դպրոցների, մանկապարտեզների և կրթահամալիրների գույքով և տեխնիկայով ապահովման միջոցառման ծախսերի կատարողականով: Ծրագիրն ուղղված է ՀՀ կառավարության՝ մինչև 2026թ. 300 դպրոցի և 500 մանկապարտեզի կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման ռազմավարական ծրագրերի իրականացմանը:

2025թ. ընթացքում «Մանկապարտեզների նոր շենքերի կառուցում» միջոցառման շրջանակներում իրականացվել են 29 մանկապարտեզի կառուցման աշխատանքներ, որոնցից 6-ի գծով աշխատանքներն ավարտվել են: Բացի այդ, ավարտվել են նաև 1 մանկապարտեզի նախագծման աշխատանքները: Միջոցառման ծախսերը կատարվել են 77.6%-ով՝ կազմելով 5.5 մլրդ դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է կատարողական ակտերի չներկայացմամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ 2 մանկապարտեզի մասով շինարարների հետ պայմանագրերը լուծվել են՝ պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման պատճառով: Նախորդ տարվա համեմատ մանկապարտեզների նոր շենքերի կառուցման ծախսերն աճել են 43.7%-ով կամ շուրջ 1.7 մլրդ դրամով՝ պայմանավորված իրականացված շինարարական աշխատանքների ծավալի աճով (կառուցվող մանկապարտեզների քանակն ավելացել է 11-ով):

Հանրակրթական դպրոցների նոր շենքերի կառուցման միջոցառման շրջանակներում իրականացվել են 72 դպրոցի կառուցման աշխատանքներ, որոնցից 3-ի կառուցման աշխատանքներն ավարտվել են: Կառուցումն ավարտված դպրոցների ընդհանուր հզորությունը (պոտենցիալ շահառուների թիվը) 682 է: Միջոցառման ծախսերը կատարվել են 93.7%-ով՝ կազմելով 39.9 մլրդ

դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ կատարված աշխատանքների մի մասի դիմաց կատարողական ակտեր չեն ներկայացվել, ինչպես նաև մեկ դպրոցի մասով՝ հողատարածքի և ելակետային տվյալների անհամապատասխանության պատճառով նախագծման համար պայմանագիր չի կնքվել: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3 անգամ (26.7 մլրդ դրամով)՝ պայմանավորված կառուցվող մեկ դպրոցի ավելացմամբ և իրականացված շինարարական աշխատանքների ծավալի աճով:

Հանրակրթական դպրոցների վերակառուցման և հիմնանորոգման միջոցառման շրջանակներում աշխատանքներ են ընթացել 123 դպրոցի հիմնանորոգման / վերանորոգման և 1 դպրոցի նախագծման գծով: 2025թ. ընթացքում աշխատանքներն ավարտվել են 65 դպրոցում, որոնց ընդհանուր հզորությունը (պոտենցիալ շահառուների թիվը) 17,853 է: Միջոցառման շրջանակներում ծախսերը կատարվել են 92.2%-ով՝ կազմելով շուրջ 23.9 մլրդ դրամ: Ծրագրից շեղումը պայմանավորված է նրանով, որ 121 դպրոցում իրականացված որոշ աշխատանքների դիմաց կատարողական ակտեր չեն ներկայացվել, իսկ 2 դպրոցի մասով դրանք բացակայել են ամբողջությամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 119.1 անգամ (23.7 մլրդ դրամով)՝ պայմանավորված դպրոցների քանակի ավելացմամբ (վերակառուցվող և հիմնանորոգվող դպրոցների քանակն ավելացել է 115-ով) և կատարված աշխատանքների ծավալով:

Հաշվետու տարում կրթահամալիրների կառուցման միջոցառման շրջանակներում աշխատանքներ են ընթացել 33 համայնքի 58 կրթահամալիրի կառուցման ուղղությամբ, որոնցից 2-ի կառուցման աշխատանքներն ավարտվել են: Միջոցառման շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 91%-ը՝ 25.2 մլրդ դրամ: Ծրագրված ցուցանիշից ծախսերի շեղումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ կատարված որոշ աշխատանքների դիմաց կատարողական ակտեր չեն ներկայացվել, ինչպես նաև մեկ կրթահամալիրի մասով առկա հողատարածքի խնդրի պատճառով շինարարական աշխատանքները չեն մեկնարկել: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.2 անգամ (17.3 մլրդ դրամով)՝ պայմանավորված օբյեկտների քանակի ավելացմամբ և կատարված աշխատանքների ծավալով (կառուցվող կրթահամալիրների քանակն ավելացել է 2-ով):

Հանրակրթական դպրոցների, մանկապարտեզների և կրթահամալիրների գույքով և տեխնիկայով ապահովման միջոցառման շրջանակներում «Մինչև 2026թ. 300 դպրոց և 500 մանկապարտեզ» ծրագրի իրականացման շրջանակում 192 դպրոց և 100 մանկապարտեզ ամբողջությամբ կամ մասնակիորեն ապահովվել է գույքով, ինչպես նաև ԿԳՄՄՆ պատվիրատվությամբ ապահովվել է գույքով շինարարությունն ավարտված կամ ավարտական փուլում գտնվող 79 վերանորոգվող դպրոց և 18 մանկապարտեզ: ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության համաձայն կառուցված բոլոր օբյեկտները պետք է ապահովվեն ամբողջությամբ նոր գույքով, և համապատասխան միջոցառման շրջանակներում գույք է տրամադրվում բոլոր այն դպրոցներին, մանկապարտեզներին և կրթահամալիրներին, որոնց համար տարբեր ծրագրերի շրջանակներում (ներառյալ՝ վարկային) իրականացված շինարարական աշխատանքներն ավարտվել են կամ գտնվում են ավարտական փուլում: Հանրակրթական դպրոցների, մանկապարտեզների և կրթահամալիրների գույքով ապահովման միջոցառման ծախսերը կազմել են շուրջ 3.4 մլրդ դրամ՝ ապահովելով 73% կատարողական: Ծրագրից շեղումը պայմանավորված է գնումների գործընթացով (մրցույթների չկայացման և դրանց կրկնակի կազմակերպման արդյունքում մի շարք պայմանագրերի կնքումը տեղափոխվել է տարեվերջ), ինչպես նաև շինարարական աշխատանքների կատարման աստիճանով: Նախորդ տարվա համեմատ գույքի ձեռքբերման ծախսերը նվազել են 4.3%-ով կամ 151.3 մլն դրամով, ինչը պայմանավորված է ձեռքբերված գույքի տեսակներով և արժեքներով:

ԿԳՄՍՆ պատասխանատվությամբ իրականացվող այլ ծրագրերից 2025թ. շուրջ 10.9 մլրդ դրամ է տրամադրվել *Արվեստների* ծրագրին՝ ապահովելով 94.6% կատարողական: Ծրագրի կատարողականը հիմնականում պայմանավորված է թատերահամերգային կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի համալրման, թատրոնների և համերգային կազմակերպությունների շենքերի կապիտալ վերանորոգման համար ներդրումների, մշակութային միջոցառումների իրականացման և թատերական ներկայացումների կատարողականով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծրագրի ծախսերն էական փոփոխություն չեն կրել: Հարկ է նշել, որ 2024թ. ֆինանսավորած որոշ միջոցառումներ 2025թ. չեն նախատեսվել:

2025թ. երաժշտարվեստի և պարարվեստի համերգների միջոցառման շրջանակներում հատկացումները տրամադրվել են 9 համերգային կազմակերպությունների՝ ուղղվելով երաժշտարվեստի և պարարվեստի պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը, երաժշտադրամատիկական, երաժշտական կատարողական, երգի-պարի արվեստին հաղորդակցմանը, նոր գաղափարների ու արժեքների տարածմանը: Փաստացի համերգների քանակը 2025թ. կազմել է 797՝ կանխատեսված 566-ի և 2024թ. 903-ի դիմաց: Նոր համերգային համարների քանակը կազմել է 117՝ գերազանցելով կանխատեսված 53-ը և 2024թ. 110-ը: 2025թ. երաժշտարվեստի և պարարվեստի համերգների միջոցառման ծախսերը կազմել են 3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 1.9%-ով կամ 55.5 մլն դրամով:

Օպերային և բալետային արվեստի ներկայացումներին աջակցության միջոցառման նպատակն է օպերային և բալետային արվեստի ավանդույթների պահպանումը, տարածումը և զարգացումը, դասական ու ժամանակակից օպերային և բալետային ստեղծագործությունների բեմադրումը: Փաստացի ներկայացումների քանակը 2025թ. կազմել է 260՝ կանխատեսված 157-ի և 2024թ. 198-ի դիմաց: 2025թ. բեմադրվել են 5 նոր ներկայացումներ, մասնավորապես՝ «Ճպուռն ու մրջյունը», «Բոլերո Իքս», «Սրբազան գարուն», «Ձյունե թագուհին» բալետները և «Ռոստամ և Սոհրաբ» օպերան: Նշված ցուցանիշների բարձ մակարդակը հիմնականում պայմանավորված է նոր ներկայացումների առաջնախաղերով, վերականգնված ներկայացումների քանակով, ինչպես նաև կազմակերպության գովազդատեղեկատվական ակտիվ գործունեությամբ: Օպերային և բալետային արվեստի ներկայացումներին հատկացված 2.1 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 16.7%-ով կամ 304.7 մլն դրամով, ինչը պայմանավորված է 2023թ. ներդրված ֆինանսավորման նոր մոդելի կիրառման շարունակությամբ: Այս մոդելը հնարավորություն է տվել ծավալել ավելի ինտենսիվ մշակութային գործունեություն՝ ապահովելով տարեկան եկամուտների մինչև 20% աճ և աշխատավարձի 37% բարձրացում: Համաձայն նոր մոդելի, կազմակերպությունը ֆինանսավորվել է նախորդ տարվա ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում հաշվեգրված սեփական եկամուտների կրկնապատիկի չափով:

Մշակութային միջոցառումների նպատակն է՝ հայ ժամանակակից արվեստի զարգացումն ու հանրահռչակումը, երիտասարդ ստեղծագործական ներուժի բացահայտումը, դրա զարգացման համար պայմանների ստեղծումը և ժամանակակից ստեղծագործական գործընթացներում ներգրավումը, նոր գաղափարների և մտահղացումների խթանումը, խաղացանկերի և երկացանկերի ժանրային ու ոճական բազմազանության և որակի ապահովումը: Միջոցառման շրջանակներում 2025թ. իրականացված միջոցառումներից հատկանշական են՝ «Կապանի միջազգային երաժշտական փառատոն»-ը, «Ջերմ Ամանոր Ջերմուկում» հեղինակային երգի հանրապետական մրցույթը, «ՖեստիՎառ» երաժշտական փառատոնը, Արտաշատի երկրորդ հանրապետական թատերական

փառատոնը, ՀՀ Գեղարքունիքի մարզում իրականացվող թատերական երկամսյակը, Արուճի հոգևոր երաժշտության փառատոնը: Մշակութային միջոցառումների իրականացմանը հաշվետու տարվա ընթացքում տրամադրվել է ավելի քան 1 մլրդ դրամ՝ ապահովելով 90.5% կատարողական: Շեղումը պայմանավորված է ԱԱՀ-ի վճարման համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով, ինչպես նաև՝ տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ մշակութային միջոցառումների գծով ծախսերը նվազել են 13.8%-ով կամ 168.4 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է դրամաշնորհային մրցույթների արդյունքներով:

Թատերական ներկայացումների միջոցառման շրջանակներում հատկացումներն ուղղվել են 14 թատրոնների գործունեության ապահովմանը: Փաստացի ներկայացումների քանակը 2025թ. կազմել է 2,251՝ նախատեսված 2,236-ի և 2024թ. 2,440-ի դիմաց, հանդիսատեսի թիվը կազմել է 333,679՝ կանխատեսված 384,586-ի և 2024թ. 404,894-ի դիմաց, իսկ նոր ներկայացումների քանակը կազմել է 50՝ նախատեսված 51-ի և 2024թ. 61-ի դիմաց: Թատերական ներկայացումների ծախսերը կազմել են ավելի քան 2 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 97%-ը: Նախորդ տարվա համեմատ միջոցառման ծախսերն աճել են 6.6%-ով կամ 125.7 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է ներդրված ֆինանսավորման նոր մոդելի կիրառմամբ: Այս մոդելը հնարավորություն է տվել ծավալել ավելի ինտենսիվ մշակութային գործունեություն՝ ապահովելով տարեկան եկամուտների մինչև 35% աճ և աշխատավարձի 50% բարձրացում:

«Թատերահամերգային կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի համալրում» միջոցառման շրջանակներում գույք է հատկացվել 6 կազմակերպության՝ Կ. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոնին, Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնին, Գ. Սունդուկյանի անվան ազգային թատրոնին, Երևանի կամերային պետական թատրոնին, Արտաշատի Ա. Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոնին և «Արամ Խաչատրյան» համերգասրահին, 2024թ. 4-ի դիմաց: Միջոցառման գծով ծախսերը կազմել են 675.1 մլն դրամ՝ ապահովելով 72.4% կատարողական: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ գույքի որոշ տեսակների մասով գնման մրցույթները կայացել են և պայմանագրերը կնքվել են տարեվերջին, որի արդյունքում գույքի մատակարարումը հետաձգվել է 2026թ.: Նախորդ տարվա համեմատ միջոցառման ծախսերն աճել են 12 անգամ կամ 618.9 մլն դրամով՝ պայմանավորված գույքով ապահովված կազմակերպությունների թվի և ձեռքբերված գույքի արժեքների աճով:

Մշակութային ժառանգության ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 87.9%-ը՝ շուրջ 5 մլրդ դրամ: Ծրագրված ցուցանիշից շեղումը հիմնականում պայմանավորված է «Հուշարձանների ամրակայում, նորոգում և վերականգնում», «Թանգարանների համար նոր շենքերի կառուցում» և «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» միջոցառումների կատարողականով: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերն աճել են 23.9%-ով կամ 957 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման, թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների, Մշակույթի զարգացման հիմնադրամի ծառայությունների ու թանգարանների և պատկերասրահների գույքային և տեխնիկական հագեցվածության բարելավման ծախսերի աճով, ինչպես նաև 2 նոր միջոցառումների ֆինանսավորմամբ:

Մշակութային ժառանգության ծրագրի շրջանակներում թանգարանների գործունեության առաջնային ուղղություններն են համարվել թանգարանային և գրադարանային առարկաների պահպանությունը, թանգարանային առարկաների համալրումը և վերականգնումը, ցուցահանդեսների և համերգների կազմակերպումը: «Թանգարանային ծառայություններ և

ցուցահանդեսներ» միջոցառման շրջանակներում կազմակերպվել է 351 ցուցահանդես՝ նախատեսված 333-ի և 2024թ. 355-ի դիմաց, 57 համերգ՝ կանխատեսված 35-ի և 2024թ. 51-ի դիմաց, թանգարանների այցելուների թիվը կազմել է 1,553,102 մարդ՝ կանխատեսված 1,292,900-ի և 2024թ. 1,543,952-ի դիմաց: Կանխատեսված արդյունքային ցուցանիշների գերազանցումը հիմնականում պայմանավորված է թանգարանների կողմից տարբեր տարիքի երեխաների, ինչպես նաև խոցելի խմբերի համար թեմատիկ կրթական ծրագրերի կազմակերպմամբ և մասնակիցների ակտիվ մասնակցությամբ, ինչպես նաև առցանց այցելուների թվի էական աճով: Թանգարանային հավաքածուներում ընդգրկված առարկաների թիվը կազմել է 2,221,341՝ կանխատեսված 2,192,249-ի և 2024թ. 2,207,085-ի դիմաց: Փաստացի բարձր արդյունքային ցուցանիշը պայմանավորված է նվիրատվությունների, հնագիտական պեղումների և այլ աղբյուրների միջոցով ֆոնդերի համալրմամբ: Թանգարանները, որոնց թվում են՝ «Հայաստանի ազգային պատկերասրահ»-ը, «Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան»-ը, «Հայաստանի պատմության թանգարան»-ը և «Մ. Սարյանի տուն-թանգարան»-ը, 2025թ. ընթացքում կազմակերպել և իրականացրել են 18 միջազգային ժամանակավոր ցուցադրություն: Բացի այդ, իրականացվել է ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման 11 ծրագիր, որոնց թվում՝ «Արհեստների միջազգային 4-րդ փառատոնը», «Իմ ձեռագործ Հայաստան», «EthnoRhythm Ազգային հնչյունների նոր զարկերակը», «Սննդի մշակույթ», «Արհեստների միջազգային փառատոնը» Գավառ քաղաքում, ինչպես նաև «Հնդկաստանի Ֆահրիդաբադ քաղաքում Սուրաջկունդի արհեստների 38-րդ միջազգային փառատոնին հայ վարպետների մասնակցությունը»՝ շուրջ 2,500 շահառուների մասնակցությամբ: Թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների միջոցառման շրջանակներում օգտագործվել է ավելի քան 2.6 մլրդ դրամ՝ ապահովելով 96.6% կատարողական: Նախորդ տարվա համեմատ միջոցառման ծախսերն աճել են 5.2%-ով կամ 129.7 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ցուցահանդեսների և համերգների ծավալների ընդլայնմամբ, միջազգային համագործակցության ծրագրերի ակտիվացմամբ:

Հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման միջոցառման շրջանակներում 2025թ. իրականացվել են 19 հուշարձանի վերականգնողական աշխատանքներ՝ 2024թ. 16-ի դիմաց, 14 հուշարձանի նախագծման և փորձաքննության աշխատանքներ՝ 2024թ. 11-ի դիմաց, և 5 հուշարձանի պեղումների աշխատանքներ՝ 2024թ. 2-ի դիմաց: 2025թ. ընթացքում ավարտին են հասցվել ՀՀ պատմամշակութային հուշարձանների և եկեղեցիների, մասնավորապես՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Ագարակ» պատմամշակութային արգելոցի և Բյուրականի Սբ. Հովհաննես եկեղեցու, ՀՀ Լոռու մարզի ««Լոռի բերդ» Քաղաքատեղի» միջնաբերդի եկեղեցու և Ամրակիցի Սբ. Նիկոլայ Հրաշագործ ռուսական եկեղեցու, ՀՀ Շիրակի մարզի Երերույքի տաճարի և փոքր դամբարանի, ինչպես նաև ՀՀ Տավուշի մարզի Կիրանց գյուղի Սուրբ Երրորդություն եկեղեցու վերականգնման ու ամրակայման աշխատանքներ: Շարունակվել են Հայոց ցեղասպանության հուշահամալիրի և թանգարանի, ՀՀ Արագածոտնի մարզի Փարպի համայնքի 5-րդ դարի Ծիրանավոր եկեղեցու, ՀՀ Արմավիրի մարզի Այգեշատ համայնքի Թարգմանչաց եկեղեցու, ՀՀ Լոռու մարզի Քոբայրավանք համալիրի գլխավոր եկեղեցու, նրան կից եկեղեցու և Մարիամաշեն եկեղեցու վերականգնման ու ամրակայման աշխատանքները: Կանխավճար է տրամադրվել ՀՀ Լոռու մարզի Յաղդանի և Սանահինի, ՀՀ Տավուշի մարզի Սրանոցի և Հախումի կամուրջների վերականգնման աշխատանքները նախագծելու նպատակով: Հաշվետու տարում նշված միջոցառմանը տրամադրվել է շուրջ 1.4 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 77.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ որոշ կատարողական ակտեր ամբողջությամբ չեն ներկայացվել, ինչպես նաև 1 օբյեկտի նախագծի մասով մրցույթը բազմակի անգամ չի կայացել՝

մասնակիցներ չլինելու պատճառով: 2024թ. համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 1.7 անգամ կամ 583.4 մլն դրամով, որը պայմանավորված է օբյեկտների քանակով և աշխատանքների ծավալներով:

2025թ. ընթացքում Մեծ Բրիտանիայի Լոնդոն քաղաքում գործող «Սէմ Ֆոգի» պատկերասրահից ձեռք է բերվել հայկական մշակութային բացառիկ արժեք՝ XII դարում պատրաստված քանդակազարդ եկեղեցու փայտյա դռան փեղկ, որը հանդիսանում է միջնադարյան արվեստի կարևոր նմուշ: «Մշակութային արժեքների ձեռքբերում և տեղափոխում» միջոցառման շրջանակում 175.4 մլն դրամ հատկացվել է Մշակույթի զարգացման հիմնադրամին՝ արժեքի ձեռքբերման և Հայաստան տեղափոխման գործընթացն ապահովելու նպատակով: Հայաստան տեղափոխվելուց հետո այն կցուցադրվի Հայաստանի պատմության թանգարանում:

2.2.13.1.4. Ֆինանսական ակտիվների գծով ելքեր

Աղյուսակ 8. 2025թ. ԿԳՄՍՆ ֆինանսական ակտիվների գծով ելքերը (մլն դրամ)

	Ճշտված պլան	Փաստ	Կատարողական ճշտված պլանի նկատմամբ (%)
Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերում՝ ըստ սուբյեկտների	106.8	106.8	100.0
«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ	106.8	106.8	100.0

2025թ. 106.8 մլն դրամ է տրամադրվել «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալի ավելացմանը՝ ընկերության համար երկու դիզելային գեներատորի ձեռքբերման նպատակով: